



Diocese of the Armenian Church  
of America

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱԻ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԱՆ  
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016 ★ MURRAY HILL 6-0710

Bishop Torkom Manoogian, Primate

Թիւ 20286  
Փետրուար 26, 1968

Հոգեցնորդ  
Տ. Վազգէն Վրդ. Թաղոյեան  
Հոգեւոր Հոգիւ Սօնթրէալի Հայոց  
եւ Նախադահ Սիսկան Խորհուրդի  
Սօնթրէալ.

Սիրելի Հայր Վազգէն,

Ստացած ենք 1968 Փետրուար 19 թուակիր Ձեր տեղեկադիրը, որով կը  
հաղորդէք թէ Գանատայի Երջանի Առաջնորդ Փոխանորդ Գեր. Տ. Վաչէ Եպս.  
Յովսէփեանի Նախադահութեամբ՝ Փետրուար 18ին գումարուած Ձեր Սիսկան  
ժողովին մէջ կատարուած է Սիսկան Խորհուրդի ութը անդամոց ընտրութիւնը,  
եւ Ներկայացնելով քու էարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձեռուն վաւերացման պաշտօնադիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Սիսկան ժողովը տեղի ունեցած է Թեմական  
կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Սիսկան  
Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան զրկել Սիսկան Խորհուրդի նորընտիր  
Դիւանի անդամոց եւ եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու ատենապետներու  
անունը, հասցէն եւ հեռանայնի թիւը:

Օրհնելով Սիսկան Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր  
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի  
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

Տիարք՝ Վահե Ալթունեան  
Նրուանդ Եիշմանեան  
Արամ Կուտսուզեան  
Եղուարդ Գասպարեան  
Խուպար Առւքիասեան  
Համբարձում Կէծէրեան  
Սիսաք Կուտսուզեան  
Հրաչ Թորիկեան

ԹորգոՄ ԵղիՍկոՊՈՍ  
Առաջնորդ

Վերջին երեքը մէկական տարի պաշտօնավարելու համար, որպէս  
ոի յաջորդ տարի չորս անդամոց համար մասնակի ընտրութիւն կատարէք: